


Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԼԱՎ Ե ՔԻՉ, ԲԱՅՑ ԼԱՎ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • 1938 • ՅԱԿԱԳԻՌԱՆ




31 JAN 2018

ԹՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԼԱՎ Ե ՔԻԶ, ԲԱՅՑ ԼԱՎ



ՀԱՅԿՈՒՍՀՐԱԾ • 1988 • ԵԵՐԵՎԱՆ

## ԼԱՎ Ե ՔԻՉ, ԲԱՅՑ ԼԱՎ

Մեր պետապարատի բարելավման հարցում Բանգյուղտեսչությունն, իմ կարծիքով, չպետք է քանակի հետևից ընկնի և շտապի: Մենք մինչև այժմ այնքան քիչ ենք կարողացել մտածել և հոգալ մեր պետապարատի վորակի մասին, վոր որինական կլինի մտահոգությունը նրա առանձնապես լուրջ նախապատրաստման մասին, Բանգյուղտեսչության մեջ իրոք ժամանակակից վորակի մարդկային նյութ կենարոնացնելու մասին, այսինքն՝ այնպիսի նյութ, վոր հետ չմնար արևմտայնվորպական լավագույն տիպարներից: Ինարկե, սոցիալիստական հանրապետության համար այս պայմանը չափաղանց համեստ ե: Բայց առաջին հինգ տարին բավականին լցրել ե մեր գլուխը թերահավատությամբ և սկեպակայիզմով: Մենք ակամահակված ենք համակվելու այդ հատկությամբ այն մարդկանց վերաբերմամբ, ովքեր չափաղանց շատ և չափաղանց հեշտ են բարբառում, որինալ, «պրոլետարական» կուլտուրայի մասին. մեզ համար սկզբում թերևս բավական ե իսկական բուրժուական կուլտուրան, մեզ համար սկզբում լավ կլինի, յեթե կառավարվենք առանց նախարարժուական կարգի կուլտուրաների առանձնապես փթթած (մաքրօվայ) տիպարների, այսինքն չինովակական կամ ճորտատիրական



11-28502 գր

В. И. ЛЕНИН  
ЛУЧШЕ МЕНЬШЕ,  
ДА ЛУЧШЕ

Армпартиздат, Ереван, 1938

կուլտուրաների և այլն: Կուլտուրայի հարցերում շտապողականությունն ու շիբերթությունն ամենից վնասակարն են: Այս բանը մեր պատանի գրականագետներից և կոմունիստներից շատերը պետք ե մի լավ ականջի ող դարձնեն իրենց համար:

Յեզ ահա, պետապարատի հարցում մենք այժմ պետք ե նախընթաց փորձից անենք այն յեղակապետք ե մենք ամեն մի ժամանակական դաշտում, վոր ավելի լավ ե մի քիչ դանդաղ առաջ գնալ:

Գետապարատի գործերը մեզանում այն աստիճանի տիրապետությունը նողկալի, վոր մենք նախ պետք ե խորապես մտածենք, թե ինչ կերպ պայքարենք նրա թերությունների դեմ, հիշերով, վոր այդ թերությունների արմատներն անցյալում են, վորը թեև հեղա ըջված ե, բայց չի վերացել չի դարձել կուլտուրայի արդեն հեռավոր անցյալին վերաբերող մի ստադիա: Հենց կուլտուրայի մասին եմ յես բող մի ստադիա: Հենց կուլտուրայի մասին եմ յես այստեղ գնում հարցը, վորովհետեւ այս գործերում միայն այն պետք ե համարել նվաճված, ինչ վոր մտել ե կուլտուրայի մեջ, կենցաղի, սովորությունների մեջ: Իսկ մեզանում, կարելի յե ասել սոցիալական կառուցվածքի մեջ լավը հանդիսացողը մինչև վերջը մտածված չե, ըմբռնված չե, զգացված չե, վերցված ե հապճեպ, չի ստուգված, չի քննված, փորձով չի հաստատված, չի ամբացված և այլն: Իհարկե, այլ կերպ չեր ել կարող լինել հեղափոխական դարաշընանում և զարգացման այնպիսի գլխավույտ արագության պարագայում, վոր հինգ տարվա մեջ ցարիզմից հասցրեց մեղ խորհրդային հասարակակարգին:

Պետք ե ժամանակին խելքի դար: Պետք ե հա-

մակվել փրկարար թերահավատությամբ դեպի սրբնաթացորեն արագ առաջխաղացումը, դեպի ամեն մի պարծենկուտություն և այլն, պետք ե խորհել ստուգելու մասին այն քայլերը դեպի առաջ, վոր մենք աղդաբարում ենք ամեն մի ժամ, անում ենք ամեն ըստեն: Նետու ամեն վայրկյան ապացուցում նրանց անկայունությունը, անսովորությունը և անհասկանալիությունը: Այստեղ շտապելը կիմներ ամենավնասակար բանը: Ամենավնասակարը կիմներ, յեթե ապավիմնեյինք այն հանգամանքին, վոր մենք մի վորեև բան գիտենք, կամ մենք ունենք փոքրիշատե նշանակելի քանակությամբ տարրեր՝ կառուցելու համար իրոք նոր ապարատ, վորն իրոք արժանի լիներ կոչվելու սոցիալիստական, խորհրդային և այլն:

Վո՞չ, այդպիսի ապարատ և նույնիսկ նրա տարրերը մենք ունենք ծիծաղելի աստիճանի քիչ, և մենք պետք ե հիշենք, վոր նրա ստեղծման համար չպետք ե խնայել ժամանակ և պետք ե ծախսել շատ, շատ, շատ տարրիներ:

Ի՞նչ տարրեր կան մեզանում այդ ապարատն ստեղծելու համար: Միայն յերկուսը: Նախ՝ բանքորները, վորոնք հրապուրված են սոցիալիզմի համար մղվող պայքարով: Այդ տարրերը բավականաչափ լուսավորված չեն: Նրանք կկամենային մեղ տալ լավագույն ապարատ: Բայց նրանք չգիտեն՝ ինչպես անեն այդ: Նրանք չեն կարող անել այդ: Նրանք մինչև այժմ չեն մշակել իրենց մեջ այնպիսի զարգացում, այն կուլտուրան, վորն անհրաժեշտ ե զրա համար: Իսկ զրա համար հենց կուլտուրա յե անհրաժեշտ: Այստեղ վոչինչ չի կարելի անել միանդամից վրա տա-

լով կամ զրոհելով, աշխուժությամբ կամ յեռանդով, կամ առասարակ մարդկային վորեե լավագույն հատկությամբ։ Յերկրորդ՝ գիտության, լուսավորության, կրթության տարրերը, վորոնց քանակը մեղանում ծիծաղելի աստիճանի քիչ ե բոլոր այլ պետությունների համեմատությամբ։

Այստեղ ևս չի կարելի մոռանալ, վոր այդ գիտելիքները մենք գենես չափազանց հակիմած ենք փոխարինելու (կամ կարծում ենք, թե կարելի յե փոխարինել) ջանասիրությամբ, սրբնթացությամբ և այլն։

Մեր պետակարատի նորացման համար մենք պետք ենք, ինչ ել վոր լինի, առաջադրենք մեզ մի խնդիր, առաջին—սովորել յերկրորդ—սովորել և յերրորդ—սովորել ու այնուհետև ստուգել վորպեսզի մեղանում գիտությունը չմնա մեռած տառ կամ մոդայական ֆրազ (իսկ այդ, մեղքներս ինչ թագցնենք, մեղանում առանձնապես հաճախ և լինում), վորպեսզի գիտությունն իրոք գառնա միս ու արյուն, կենցաղի բաղկացուցիչ տարր՝ լիովին և իսկապես։ Մի խոսքով՝ մենք պետք ե առաջադրենք վհաջ թե այն պահաջները, վոր Արեմայան Յելլոպայի բուրժուազիան և առաջադրում, այլ այն պահանջները, վորոնց առաջադրելն արժանի և վայել և մի յերկրի, վորն իրեն խնդիր և դնում դարձանալ վորպես սոցիալիստական յերկիր։

Հետեւթյուններ ասածից։ Բանդյուղտեսչությունը վորպես մեր ապարատի բարելավման գործիք մենք պետք ե դարձնենք իրոք որինակելի մի հիմնարկ։

Վորպեսզի նա կարողանա համար անհրաժեշտ բարձրության, պետք ե հետեւ այս կանոնին—յոթն անգամ չափիք, մի անգամ կտրիր։

6

Սրա համար հարկավոր ե, վորպեսզի նոր ժողկությատի ստեղծման համար գործադրվի մեծագույն զգուշությամբ, մտածվածությամբ, իրազեկությամբ իրոք այն լավագույնը, ինչ վոր կա մեր սոցիալական կարգերում։

Սրա համար հարկավոր ե, վորպեսզի մեր սոցիալական կարգերում յեղած լավագույն տարրերը, այն են նախ առաջապես բանվորները և, յերկրորդ՝ իրոք լուսավորված տարրերը, վորոնց համար յերաշխավորել կարելի յե, թե նրանք վոչ մի խոսք չեն ընդունի սոսկ հավատի վրա հիմնվելով, վոչ մի խոսք չեն ասի ընդգեմ խղճի,—չվախենան խոստովանել վոչ մի դժվարություն և չվախենան վոչ մի պայքարից՝ համար համար իրենց՝ լրջորեն առաջադրուծ նպատակին։

Մենք արգեն հինգ տարի յե, ինչ իրարացման մեջ ենք մեր պետակարատը լավացնելու համար, բայց այդ հենց իրարացում և միայն, վորը հինգ տարվա ընթացքում ապացուցել և լոկ իր անպետքությունը, կամ նույնիսկ իր վնասակարությունը։ Վորպես իրարացում նա մեզ տալիս եր աշխատանքի յերեսութականություն, իսկապես ապականելով մեր հիմնարկներն ու մեր ուղեղները։

Հարկավոր ե, վերջապես, վոր այդ այլ կերպ մինի։

Պետք ե կանոն ընդունել՝ ավելի լավ և թվով պակաս, բայց վորպակով ավելի բարձր։ Պետք ե կանոն ընդունել՝ ավելի լավ և յերկու տարուց հետո կամ նույնիսկ յերեք տարուց հետո, քան հապճեով, առանց մարդկային սոլիդ նյութ ստանալու վորեե հույսի։

Յես գիտեմ, վոր այս կանոնը դժվար կլինի պահապանել և կիրառել մեր իրականության նկատմամբ։ Յես գիտեմ, վոր հազարավոր սողանցքներով մեզանում իր համար ճանապարհ կրանա հակառակ կանոնը։ Յես գիտեմ, վոր հարկ կլինի դիմակային անհողողգություն ցույց տալ, վոր հարկ կլինի դիմակային անհողողգություն յերևան բերել, վոր այստեղ աշխատանքը գոնեառաջին տարիներում, կլինի վերին աստիճանի անշնորհակալ։ և, այսուամենայնիվ, յես համոզված եմ, վոր միայն այդպիսի աշխատանքով մենք կարող կլինենք հասնել մեր նպատակին և, միայն այդ նպատակին հասնելով մենք կստեղծենք մի հանրապետություն, վորն իրոք արժանի կլինի կոչվելու խորհրդական, սոցիալիստական և այլն, և այլն, և այլն։

Ընթերցողներից շատերը, հավանորին, չափազանց անշան գտան այն թվերը, վոր յես իրեկ որինակ բերի իմ առաջին հոգվածում<sup>1</sup>։ Յես հավատացած եմ, վոր շատ հաշվարկումներ կարելի յե բերել՝ ապացուցելու համար այդ թվերի վոչչբավական լինելը։ Բայց յես կարծում եմ, վոր այդպիսի և ամեն տեսակի հաշվարկումներից պետք ե մենք բարձր դասենք մի բան իրոք որինակելի վորակի շահը։

Յես կարծում եմ, վոր մեր պետապարատի համար հենց այժմ և հասել վերջապես ժամանակը, յերբ մենք պետք ե աշխատենք նրա վրա ինչպես հարկն և, ամբողջ լըջությամբ և յերբ այդ աշխատանքի ամենամվասակար գիծը թերևս կլինի շտապողականությունը։ Ուստի յես շատ կուզեյի նախազգուշացնել այդ թվերը։

<sup>1</sup> Այսինքն՝ «Ինչպես վերակազմենք Բանգյուղտեսչությունը» հոդվածը, հատ. XXVII, էջ 402—405, Խմբ.։

մեծացնելու դեմ։ Ընդհակառակը՝ իմ հայացքով այստեղ պեսք և առանձնապես ժամանակությունը վերաբերմամբ։ Եխտակ խոսենք։ Բանգյուղտեսչության ժողկումատն այժմ հեղինակության նշույլ անգամ չունի։ Բոլորը գիտեն, վոր չկան ավելի վատ կազմակերպված հիմնարկները, քան մեր Բանգյուղտեսչության հիմնարկներն են, և վոր ժամանակակից պայմանների մեջ այդ ժողկումատից վոչինչ չի կարելի պահանջել։ Մենք պետք ե հաստատուն կեղալով հիշենք այդ, յեթե կամենում ենք իրոք նպատակ դնել միքանի տարրուց հետո ստեղծելու մի հիմնարկ, վորը, նախ՝ պետք ե լինի որինակելի, յերկրորդ՝ պետք ե անպայման վատահություն ներշնչի ամենքին և, \* յերրորդ՝ ապացուցի ամենքին և ամեն մեկին, վոր մենք իրոք արդարացրել ենք այնպիսի բարձր հիմնարկի աշխատանքը, վորպիսին և Կվէ։ Հստիս՝ պետք ե միանգամից և անդառնալի կերպով արտաքսել ծառայողների թվի ամեն մի ընդհանուր նորմա։ Բանգյուղտեսչության ծառայողներին մենք պետք ե ընտրենք բոլորովին հատուկ յեղանակով և վոչ այլ կերպ, քան հիմնվելով ամենախիստ ստուգման վրա։ Իսկապես ինչ միտք ունի կազմել մի ժողկումատ, վորտեղ աշխատանքը կատարվեր մի կերպ, դարձյալ նվազագույն վատահություն չներշնչելով գեղի իրեն, վորտեղ խոսքն ունենալը անհունորեն փոքր հեղինակություն։ Յես կարծում եմ, վոր դրանից խուսափելը մեր գլխավոր խնդիրն և այն տեսակի վերակառուցման մեջ, վոր մենք այժմ նկատի ունենք։

Այն բանվորները, վորոնց մենք ներգրավում ենք աշխատանքի իրեկ Կվէ անդառների, պետք և անընի

լինեն, վորսկես կոմունիստներ, և յես կարծում եմ, վոր նրանց վրա դուես պետք եւ յերկարատև աշխատանք թափել, վորպեսզի սովորեցնենք նրանց իրենց աշխատանքի յեղանակներն ու խնդիրները։ Հետո այդ աշխատանքի մեջ պետք եւ ոգնական լինի վորոշ քանակի քարտուղարական պերսոնալ, վորին պետք կլինի յեռակի ստուգման յենթարկել ծառայության նշանակելուց առաջ։ Վերջապես՝ այն պաշտոնատար անձերը, վորոնց մենք կվստահանանք իրրեւ բացառություն միանգամից դնելու Բանգյուղեսչության ծառայողների պաշտոնում, պետք եւ բավարարեն հետեւյալ պոյմաններին։

առաջին՝ նրանց պետք եւ յերաշխավորած լինեն միքանի կոմունիստներ։

յերկրորդ՝ նրանք պետք եւ մեր պետապարատը պիտենալու քննություն տան։

յերրորդ՝ նրանք պետք եւ քննություն տան մեր պետական ապարատի հարցի վերաբերյալ թերություն հիմունքները գիտենալու, կառավարման գիտության, գործավարման հիմունքները գիտենալու և այլն։

չորրորդ՝ նրանք այնպես պետք եւ աշխատակցին ԿՊՀ անդամների և իրենց քարտուղարության հետ, վորպեսզի մենք կարողանանք յերաշխավորել ամբողջությամբ վերցրած այդ բովանդակ ապարատի աշխատանքների համար։

Յես գիտեմ, վոր այս պահանջները յենթագրում են չափաղանց մեծ պայմաններ, և յես շատ հակված եմ վախենալու, վոր Բանգյուղեսչության «պրակտիկնեղմ» մեծամասնությունն անիրազործելի կհայտարարի այս պահանջները կամ արհամարհանքով կծիծաղի

նրանց վրա։ Բայց յես հարց եմ տավիս Բանգյուղտեսչության այժմյան զեկավարներից կամ նրա հետ առնչություն ունեցող անձերից վորեն մեկին, կարող եւ արդյոք նա խղճով ասել ինձ—գործնականում ի՞նչ կարեք կա այնպիսի ժողովադատի, վորպիսին Բանգյուղտեսչությունն եւ Յես կարծում եմ, վոր այս հարցը կոզմի նրան գտնելու չափի զգացումը։ Կամ չարժե մեղնում այնքան շատ տեղի ունեցած վերակազմություններից մեկով զբաղվել այնպիսի անհուսալի գործի վերակազմությամբ, վորպիսին Բանգյուղտեսչությունն եւ, կամ պետք եւ իրոք խնդիր դնենք մեղ դանդաղ, դժվարին, արտասովոր ճանապարհով, վոչ առանց բազմաթիվ ստուգումների, ստեղծելու մի իրոք որինակելի բան, վոր ընդունակ լինի ամենքնին և ամեն մեկին հարգանք ներշնչելու, և վոչ այն պատճառով միայն, վոր այդ պահանջում են աստիճաններն ու կոչումները։

Յեթե համբերության պաշար չունենանք, յեթե այդ գործին միքանի տարի չնվիրենք, ապա լավ եւ ամենեւն չձեռնարկենք նրան։

Հատիս՝ այն հիմնարկներից, վոր մենք արգեն թիւել ենք, աշխատանքի բարձրագույն ինստիտուտների և նման այլ հաստատությունների ասղարեղում, պետք եւ ընտրենք նվազագույնը, ստուգենք միանդամյն լուրջ գրվածքը և աշխատանքը շարունակենք միայն այնպես, վոր այդ գրվածքն իրոք դանվի ժամանակակից գիտության բարձրության վրա և առ մեղ նրա բոլոր յերաշխիքները։ Այն ժամանակ ուստովիսկան չի լինի հուսալ վոր միքանի տարում կստանանք այնպիսի մի հիմնարկ, վորն ի վիճակի կլինի կատարել իր գործը, այն եւ սիստեմատիկորեն, անշեղ կերպով աշ-

խատել մեր պետապարատի բարելավման վրա, վայելով բանվոր դպրակարգի, Ռուսաստանի կոմունիստական կուսակցության և մեր հանրապետության բնակչության ամբողջ մասսայի վստահությունը:

Դրա համար նախապատրաստական գործունեյությունն արդեն այժմ կարելի է լինել սկսել: Յեթե Բանդյուլտեսչության ժողովածառ համաձայներ ներկա փոխակերպման պլանին, այն ժամանակ նա կարող էլիներ այժմ սկսել նախապատրաստական քայլերն այն նկատառումով, վոր սիստեմատիկորեն աշխատեր ընդհուպ մինչև նրանց լիակատար ավարտումը, չշտապելով և չճրաժարվելով մի անգամ շինածը վերափոխելուց:

Ամեն մի կիսատ վճիռ այստեղ լինել ծայր աստիճանի վնասակար: Վորպիսի այլ նկատառումներով ել առաջարկվելու լինելին Բանդյուլտեսչության ծառայողների ամեն տեսակի նորմաները, նրանք, եյապես, հիմնված կլինելին չինովմիկական հին նկատառումների վրա, հին նախապաշարումների վրա, այն բանի վրա, ինչ վոր արդեն դատապարտված ե, ինչ վոր ընդհանուր ծաղը և ասածացնում և այլն:

Հարցն այստեղ եյապես այսպես և դրված.

Կամ ցույց տանք այժմ, վոր մենք լրջորեն մի վորեւ բան սովորել ենք պետական շինարարության գործում (մեղք չի լինի, յեթե հինգ տարում մի բան սովորած լինենք), կամ—վոր մենք չենք հասունացել դրա համար, և այն ժամանակ չարժե ձեռնարկել գործին:

Ես կարծում եմ, թե անհամեստություն չի լինի յենթազրել՝ նկատի ունենալով մեր ունեցած մարդկային նյութը, վոր մենք բաժականին սովորել ենք, վոր պեսզի սիստեմատիկ կերպով և նորից նոր կառուցենք

գոյնե մեկ ժողովածառ: Ճիշտ ե, այդ մեկ ժողովածառը պետք է իրենով վորոշի մեր բովանդակ պետապարատն ամբողջությամբ առած:

Այժմ հեթ կոնկուրս հայտարարել առհասարակ աշխատանքի և հատկաղեա կառավարման աշխատանքի կազմակերպմանը նվիրված յերկու կամ ավելի գասագրքեր կազմելու համար: Իբրև հիմք կարելի յի ընդունել արգելու մեր ունեցած՝ Յերմանսկու գիրքը<sup>1</sup>, թեւ այդ գիրքը, փակազգերում ասած, աչքի յի ընկնում դեպի մենշևկոմը տածած ակներեւ համակրությամբ և պետքական չի լինի Խորհրդային իշխանության համար հարմար դասագիրք կազմելու: Հետո, կարելի յի հիմք ընդունել Կերժենցեվի նորերս հրատարակած գիրքը<sup>2</sup>, վերջապես՝ պիտանի կարող և լինել նաև յեղած մասնակի ձեռնարկների մի վորեւ մասը:

Միքանի պատրաստված և բարեխիղճ մարդ ուղարկել Գերմանիա կամ Անգլիա՝ գրականություն հավաքելու և այդ հարցն ուսումնասիրելու համար: Անգլիայի անունը տալիս եմ յես, նկատի ունենալով այն հանդամանքը, յեթե անհնարին լինի Ամերիկա կամ Կանադա ուղարկելը:

Հանձնաժողով նշանակել<sup>3</sup> կազմելու համար Բանդյուլտեսչության մեջ ծառայել ցանկացող թեկնածուների քննությունների սկզբնական ծրագիրը, և նմանապես ԿԸՀ անդամության թեկնածուների:

Այս և սրա նման աշխատանքները, հարկավ, դըժ-

<sup>1</sup> Նկատի ունի Ո. Ա. Ցերմանսկու «Научная организация труда и система Тейлора» գիրքը, ГИЗ, 1922թ.: Խմբ:

<sup>2</sup> Պ. Մ. Կերժենցեվի «Принципы организации труда», ГИЗ, Պետրոգրադ, 1922 թ.: Խմբ:

վարություն չեն լինի վհչ Բանգյուղտեսչության ժողովում, վհչ այդ հաստատության կողեզիայի անդամների, վհչ կը կը նախագահության համար:

Դրան զուգահեռ հարկ կլինի նշանակել նախապատրաստական հանձնաժողով, վոր նպատակ կունենա վորոնել թեկնածուներ կը անդամների պաշտօնի համար: Յես հույս ունեմ, վոր այդ պաշտօնի համար մեղանում այժմ կդանվեն ավելի քան բավականաչափ թեկնածուներ թե բոլոր գերատեսչությունների փորձված աշխատողների մեջ թե նաև մեր խորհրդային գպրոցների ուսանողների մեջ: Հազիվ թե ճիշտ լինի, յեթե նախապես բացառենք այս կամ այն կատեգորիան: Հավանորեն հարկ կլինի նախապատվություն տալու այդ հիմնարկի զանազանակերպ կազմին, մի հիմնարկի, վորի մեջ մենք պետք ե վորոնենք շատ հատկությունների միացում, տարբեր արժանիքների միացում, այնպես վոր այսակեղ հարկ կլինի աշխատել թեկնածուների ցուցակը կազմելու խնդրի վրա: Որինակ ամենից շատ անցանկալի կլիներ, յեթե նոր ժողկումատը կազմված լիներ մի շաբանով, ամենք թե չինովնիկական տիպի ու բնույթի մարդկանցից, կամ բացառելով այնպիսի մարդկանց, վորոնց առանձնահատկությունն ե հանդիսանում ենշատ շփվելու թափանցելու ընդունակությունն այնպիսի շրջաններ, վոր այնքան ել սովորական չեն այդ տեսակ աշխատողների համար և այլն:

\* \* \*

Յես կարծում եմ, վոր ամենից լավ արտահայտած կլինեմ միտքս, յեթե իմ պլանը համեմատեմ ակաղե-

միական ախպի հիմնարկների հետ: Կը անդամները պարտավորված կլինեն սխատեմատիկորեն աշխատել իրենց նախադասության գեկավարությամբ՝ Քաղըյուրոյի բոլոր թղթերը և փաստաթղթերն աչքի անցնելու գործ: Դրա հետ միասին նրանք պետք ե կանոնավոր կերպով բաշխեն իրենց ժամանակը մեր հիմնարկների գործավարության ստուգման՝ առանձին աշխատանքների միջև, սկսած ամենամանը և մասնավոր հիմնարկներից և վերջացրած պետական բարձրագույն հիմնարկներով: Վերջապես, նրանց աշխատանքների մեջ ե մտնում տեսությամբ պարապել այսինքն՝ այն աշխատանքի կազմակերպման տեսությամբ, վորին նրանք մտադիր են նվիրել իրենց, և գործնական պարապմունքները՝ կամ իին ընկերների, կամ աշխատանքի կազմակերպման բարձրագույն ինստիտուտների դասատունների ղեկավարությամբ:

Բայց յես կարծում եմ, վոր նրանց յերեք չելլիճակի սահմանափակվել այդ տեսակ ակաղեմիական աշխատանքներով: Դրանց զուգընթաց հարկ կլինի, վոր նրանք նախապատրաստեն իրենց այնպիսի աշխատանքների, վորոնց յես չեյի քաշվի անվանել նախապատրաստում—վորսալու, չեմ ասի—խարդախներին, բայց դրա նման մի բան, և առանձին խորամանկություններ հնարել՝ քողարկելու համար իրենց արշավանքները, մոտեցումները և այլն:

Յեթե արևմտայիւրոպական հիմնարկներում նման առաջարկները կհարուցեյին չլաված զայրույթ, բարոյական վրդովմունքի զգացում և այլն, ապա յես հուսով եմ, վոր մենք գեռ այնքան ել չենք բյուրոկրատացել վորպեսդի ընդունակ լինենք դրան: Մեղանում նեպը

դեռևս չի կարողացել ձեռք բերել այնպիսի հարդանք՝ վորպեսզի մենք նեղանանք, յերբ միտք և հայտնում, թե այստեղ կարող են վորսալ վորեն մեկին։ Մեղանում դեռևս այնքան նոր և կառուցված Խորհրդային հանրապետությունը, և հավաքված կա ամեն տեսակ խլամի այնպիսի կույտ, վոր հազիվ թե վորեն մեկը մտածի նեղանար, յերբ խոսք ե լինում այն բանի մասին, թե այդ խլամի մեջ կարելի յե պեղումներ կատարել միքանի խորամանկությունների ոգնությամբ, հետախուզումների ոգնությամբ, վորոնք յերբեմն ուղղված են գեղի բավականին հեռավոր աղբյուրներ, կամ բավականին վոլորապտույտ ճանապարհով են կատարվում, իսկ յեթե մտածի, ապա հավատացած կարելի յե լինել, վոր այդպիսի մարդու վրա մենք բոլորս ամբողջ հոգով կծիծաղենք։

Մենք հույս ունենք, վոր մեր նոր Բանդյուղտեսչությունն իր հետեւ կիտողնի այն հատկությունը, վոր ֆրանսացիներն անվանում են pruderie, վոր մենք անվանել կարող ենք ծիծաղելի սեթենթություն կամ ծիծաղելի գոռողություն, և վորը ծայր աստիճանի ձեռնտու յե մեր ամբողջ թե խորհրդային և թե կուսակցական բյուրոկրատիային։ Փակագծերի մեջ տաված լինի, մեղանում բյուրոկրատիա լինում և վահայն խորհրդային, այլև կուսակցական հիմնարկներում։

Յեթե յես վերը գրեցի, թե մենք պետք ե սովորենք ու սովորենք աշխատանքի բարձրագույն կազմակերպմանը նվիրված ինստիտուտներում և այն, այդ ամենեին չի նշանակում, վոր յես այդ «ուսումը» վորեն չափով հասկանում եմ զպրոցավարի կամ վոր յես սահմանափակում եմ միայն դպրոցական ուսումա-

մտքով։ Հուսով եմ, վոր վոչ մի կսկական հեղափոխական կասկած չի ունենա իմ մասին, թե յես այս դեպքում «ուսում» ասելով հրաժարվում եմ հասկանալ վորեն կիսակատակային արարք, վորեն հնարամտություն, վորեն խորամանկություն կամ զրա նման մի բարեպատշաճ ու լուրջ պետության մեջ այս միտքն իրոք սարսափ կառաջցներ, և վոչ մի կարգին չինո՞ւիլ չեր համաձայնի նույնիսկ նրա քննարկումը թույլ տալ բայց յես հույս ունեմ, վոր մենք դեռ այնքան ել չենք բյուրոկրատացել, և վոր մեղանումայդ մտքի քըննարկումը վոչինչ չի առաջացնում, բացի ուրախությունից։

Իսկապես, ինչու չմիացնենք հաճելին ոգտակարի հետ։ Ինչու չոգտվենք վորեն կատակային կամ կիսակատակային խորամանկությունից, վորպեսզի բանենք վորեն ծիծաղելի, վորեն վնասակար, վորեն կիսածիծաղելի, կիսավնասակար բան և այն։

Ինձ թվում ե, վոր մեր Բանդյուղտեսչությունը քիչ չի շահի, յեթե քննության առնի այս նկատառումները, և վոր այն կազուսների ցուցակը, վորոնց միջոցով մեր ԿՎՀ կամ Բանդյուղտեսչության գծով իր կունդաները տարել են իրենց միքանի ամենափայլուն հաղթանակները, քիչ չի հարստացվի մեր ապագա «բանդյուղտեսչականների» և «կենտվերահոկչականների» արկածներով այնպիսի վայրերում, վորոնք այնքան ել դյուրհիշատակելի չեն բարեպատշաճ և մանրախնդիր դասագրքերում։

\* \*

Ինչպես կարելի յե միացնել կուսակցական հիմ-



Նարկները խորհրդային հիմնարկների հետ։ Այստեղ  
չկա արդյոք վորեւ անթույլատրելի բան։

Յես այս հարցը գնում եմ վոչ իմ անունից, այլ  
նրանց անունից, վորոնց մասին յես վերն ակնարկեցի,  
ասելով, թե մեղնում բյուրոկրատներ կան վոչ միայն  
խորհրդային, այլև կուսակցական հիմնարկներում։

Իսկապես, ինչո՞ւ չմիացնենք մեկը մյուսի հետ,  
քանի վոր գործի շահն և պահանջում այդ։ Միթե վոր  
են մեկը չի նկատել յերբեցից, վոր նման միացումն  
այնպիսի մի ժողովատում, ինչպիսին Արագործող-  
կոմատն ե, շատ մեծ ոգուտ ե տալիս և գործադրվում  
և նրա հենց սկզբից։ Միթե Քաղցրուրոյում չեն քըն-  
նարկում կուսակցական տեսակետից շատ մանր ու  
խոշոր ինպիրներ՝ արտասահմանյան տերությունների  
«քայլերին» ի պատասխան մեր կողմից արվելիք «քայ-  
լերի» մասին, կանխելու համար այդ տերությունների,  
ասենք, խորամանկությունները, յեթե չարտահայտվենք  
ավելի պակաս վայելուչ։ Միթե խորհրդայինի և կու-  
սակցականի այս ձկուն միացումը չի հանդիսանում մեր  
քաղաքականության մեջ ահազին ուժի աղբյուր։ Յես  
կարծում եմ այն, ինչ վոր արդարացըել և իրեն,  
ամրացել մեր արտաքին քաղաքականության մեջ և  
արդեն սովորությարձել այնպիս, վոր վոչ մի կասկած  
չի հարուցում այդ բնագավառում, կլինի առնվազն  
նույնքան տեղին (իսկ յես կարծում եմ, վոր կլինի  
շատ ավելի տեղին) մեր ամբողջ պետական ապարատի  
նկատմամբ։ Իսկ չե՞ վոր Բանգյուղտեսչությունը հենց  
նվիրված ե մեր ամբողջ պետական ապարատին, և  
նրա գործունեյությունը պետք ե վերաբերի անխափը  
բոլոր և ամեն տեսակ պետական հիմնարկներին, թե

տեղական, թե կենտրոնական, թե առևտուական, թե  
գուտ չինովնիկական, թե ուսումնական, թե արխիվային,  
թե թատրոնական և այլն—մի խոսքով՝ բոլորին, ա-  
ռանց ամենափոքր բացառության։

Ուրեմն ինչո՞ւ մի այնպիսի հիմնարկի համար,  
վորն այդքան լայն թափ ունի, վորից բացի այդ պա-  
հանջում և գործունեյության ձեւերի չափազանց ճկու-  
նություն, —ուրեմն ինչո՞ւ նրա համար թույլ չտանը  
կուսակցական վերահսկողական հիմնարկի յուրատեսակ  
ձուլումը խորհրդային վերահսկողական հիմնարկի հետ։

Յես զրանում չեյի տեսնի վոչ մի խոչընդուռ։ Ավե-  
լին, յես կարծում եմ, վոր այդպիսի միացումը հաջող  
աշխատանքի միակ յերաշխիքն ե։ Յես կարծում եմ,  
վոր դրա վերաբերմաքը յեղած բոլոր տարակույցները  
ուղարկում են սոզում մեր պետապարատի ամենափշոտ  
անկյուններից և վոր այդ տարակույցներին պետք ե  
պատասխանել միայն մի բանով—ծաղրով։

\* \*

Մի ուրիշ կասկած։ հարմար և արդյոք ուսումնա-  
կան գործունեյությունը միացնել պաշտոնային գոր-  
ծունեյության հետ։ Ինձ թվում ե, թե վոչ միայն հար-  
մար ե, այլև հարկավոր ե։ Ընդհանրապես տասձ՝ մենք  
արդեն վարակվել ենք արևմտայիշվրուղական պետա-  
կանությունից—չսայած մեր ամբողջ հեղափոխական  
վերաբերմունքին գեպի այն—մի ամբողջ շարք ամե-  
նալիսակար և ամենածիծաղելի նախապաշտամունք-  
ներով իսկ մասամբ մեզ վարակել են զրանով գիտա-  
վորյալ կերպով մեր սիրելի բյուրոկրատները, վոչ  
առանց միտումի, այն նենգամիտ հուսով, վոր նման

նախապաշարմունքների պղտոր ջրում նրանց հաճախ կհաջողվի ձուկ վորսալ և յերբեմն ձուկ վորսացել են նրանք այդ պղտոր ջրում այն աստիճան, վոր միայն մեզանից բոլորովին կույցերը չեն տեսնում, թե վորքան լայնորեն եր կատարվում այդ վորսը:

Մենք «սոսկալի» հեղափոխական ենք հասարակական, տնտեսական և քաղաքական հարաբերությունների ամբողջ բնագավառում: Բայց այն բնագավառում, վոր վերաբերում ե աստիճանահարգության գործավարության ձևերի և ծեսերի պահպանմանը, մեր «հեղափոխականությունը» շատ հաճախ տեղի յե տալիս ամենահոտած հնամոլության: Այսուղ հաճախ կարելի յե տեսնել մի անհետաքբքարկան յերկույթ, թե ինչպես հասարակական կյանքում մեծագույն թոփչքը դեպի տոաջմիանում ե հըեղափոր յերկշոտության հետ՝ ամենափոքրիկ փոփոխությունների հանդեպ:

Յեկ այդ հասկանալի յե, վորովհետեւ ամենախիզախ քայլերը դեպի առաջ կատարվում եյին մի բնագավառում, վորը զաղուց ի վեր կազմում եր տեսության սեփականությունը, մի բնագավառում, վորը մշակվում եր գլխավորապես և նույնիսկ գրեթե բացառապես տեսականորեն: Ռուս մարդը՝ չինովիկական նողկալի իրականությունից՝ տանն եր գտնում հոգու սփոփանքը, ստեղծելով տեսական չափազանց խիզախ կառուցվածքներ, ուստի և այդ չափազանց խիզախ տեսական կառուցումները մեզանում ստանում եյին արտասովոր միավորմանի բնույթ: Մեղանում կողք-կողքի հաշտ ապրում եյին տեսական խիզախությունն ընդհանուր կառուցումների մեջ և զարմանալի յերկշոտությունը վորեն ամենաաննշան գըա-

սենյակային ոեփորմի նկատմամբ: Մի վորեն համաշխարհային մեծագույն հողային հեղափոխություն մշակվում եր՝ ուրիշ պետություններում չլսված խիզախությամբ, իսկ զբակության չեր բավականանում ֆանտազիան մի վորեն տասներորդական գրասենյակային ոեփորմի համար, չեր բավականանում ֆանտազիան կամ չեր բավականանում համերերությունը՝ կիրառելու այդ ոեփորմի նկատմամբ նույն ընդհանուր դրույթները, վորոնք այնպիսի «փայլուն» արդյունքներ եյին տալիս, յերբ կիրառվում եյին ընդհանուր հարցերի նկատմամբ:

Ուստի և մեր այժմյան կենցաղն իր մեջ միացնում ե զարմանալի չափով հանդուզն խիզախության և ամենաչին փոփոխությունների հանդեպ ցուցաբերվող՝ մտքի յերկշոտության գծեր:

Յես կարծում եմ, վոր այլ կերպ չի յեղել վոչ մի իրոք մեծ հեղափոխության ժամանակ, վորովհետեւ իրոք մեծ հեղափոխությունները ծնվում են այն հակասություններից, վոր կան հնի, հինը մշակելու գործի և ամենաարստրական կերպով նորին ձգտելու միջն, վորը պետք ե արդեն այնպիս նոր լինի, վորպեսզի նրանում հնության վոչ մի գրան չլինի:

Յեկ վորքան ավելի յե սրաթափ այդ հեղափոխությունը, այնքան ավելի յերկար տեի այն ժամանակը յերբ մի ամբողջ շարք այդպիսի հակասություններ կպահպանվեն:

\* \*

Մեր կենցաղի ընդհանուր գիծն այժմ հանդիսանում ե հետեյալը, մենք խորտակել ենք կապիտալիստական արդյունարերությունը, աշխատել ենք հիմնի-

վեր խորտակել միջնադարյան հիմնարկները, կալվածատիրական հողատիրությունը և այդ բանի հիման վրա ստեղծել ենք մանր ու մանրագույն գյուղացիություն, վորը պրոլետարիատի հետևից ե գնում, վատահություն ունենալով նրա հեղափոխական աշխատանքի արդյունքների հանդեպ: Այդ վատահության վրա հենվելով մեզ համար, սակայն, ենշա չե դիմանալ մինչեւ սոցիալիստական հեղափոխության հաղթանակն ավելի զարգացած յերկրներում, վորովհետև մանր ու մանրագույն գյուղացիությունը, մանավանդ նեպի որով, ըստ տնտեսական անհաժեղշտության մնում ե աշխատանքի արտադրողականության ծայրահեղորեն ցածր մակարդակի վրա: Բացի գրանից՝ միջազգային իրավությունն ել առաջացրեց այն, վոր Ծովասատանն այժմ հետ ե մղված, վոր ընդհանուր առմամբ այժմ մեզանում ժողովրդական աշխատանքի արտադրողականությունը զգալի չափով ավելի քիչ ե բարձր, քան մինչեւ պատերազմը: Արևմտա-յելլոպական կապիտալիստական տերությունները, մասսամբ գիտակցաբար, մասսամբ տարերայնորեն, գործադրեցին բոլոր հնարավոր միջոցները, վորովեսզի մեզ հետ մղեն, վորովեսզի ողատարծեն քաղաքացիական պատերազմի տարրերը Ծովասատանում՝ յերկիրը վորքան կարելի յե ավելի ավերելու համար: Հենց այդպիսի յելքն իմպերիալիստական պատերազմից պատկերացվում եր, իհարկե, նշանակալից ոգուտ բերող մի յելք:— յեթե մենք չտագլենք Ծովասատանում հեղափոխական կարգը, համենայն դեպս, մենք կղմիւրացնենք նրա զարգացումը դեպի սոցիալիզմ, —այսպես եին մոտավորապես զատում այդ տերությունները, և իրենց տեսակետից

նրանք չեյին կարող այլ կերպ դատել: Արդյունքն այն յեղավ, վոր նրանք ստացան իրենց խնդրի կիսալուծումը: Նրանք չտապահցին նոր կարգերը, վոր հեղափոխությունն ե ստեղծել, բայց նրանք հնարավորությունն չտվին այդ կարգերին խկույն և անելու դեպի առաջ այնպիսի քայլ, վորն արդարացներ սոցիալիզմի հախագուշակությունները, վորը հնարավորությունն տար նըանց հսկայական արագությամբ վորություն արագորդական ուժերը, զարգացնելու զարգացնելու արագորդական ուժերը, վորոնք կազմացն ըոլոր հնարավորությունները, վորոնք կազմակերպություններին ու կղառնային սոցիալիզմ, ակնառու կերպակելին ու կղառնային սոցիալիզմ, ակնառու կերպակելին ապացուցելու ամեն մեկին ու ամենաքին, վոր սոցիալիզմի իր մեջ թափցրած ունի հսկայական համար մեջեր և վոր մարդկությունն այժմ զարգացման նոր, արտասովոր փայլուն հնարավորություններ բնուող ստադիայի յե անցել:

Միջազգային հարաբերությունների այնպիսի սիստեմ ե զամավորվել այժմ, վոր Յելլոպայում պիտություններից մեկն ստրկացված ե հաղթող պետությունների կողմից — դա Գերմանիան ե: Այս, մի շարք պետությունները, և այն ել Արևմուտքի ամենահին պետությունները, հաղթության հետեանքով ունեցան այնպիսի պայմաններ, յերբ կարող են ոգովիլ այդ հաղթությունից մի շարք անկարես զիջումներ անելու, համար իրենց ճնշված զաստկարգերին, — զիջումներ, վորոնք այնուամենայնիվ հետ են զցում այդ պետություններում հեղափոխական շարժումը և ստեղծում «սոցիալական հաշտության» վորոց նմանություն:

Մինչույն ժամանակ ամբողջ մի շարք յերկրներ, Արևելքը, Հնդկաստանը, Չինաստանը և այլն, հենց վերջին

իմպերիալիստական պատերազմի հետևանքով վերջնաշականապես դուրս գցվեցին իրենց հունից: Նրանց զարգացումը վերջնականապես սկսեց ընթանալ համայնքաբական կապիտալիստական մասշտաբի համաձայն: Նրանց մեջ սկսվեց համայնքուղական խմորում: Յեթև այժմ պարզ եւ ամբողջ աշխարհի համար, վոր նրանք ներգրավվել են այնպիսի զարգացման մեջ, վորը չի կարող չտանել դեպի ամբողջ համաշխարհային կապիտալիզմի ճգնաժամ:

Այսպես ուրեմն, մենք ներկա՝ մոմենտին կանգնած ենք այս հարցի առաջ, թե կհաջողվի արդյոք մեզ զիմանալ մեր գյուղացիական մանր և մանրագույն արտադրությամբ, մեր ավելիվածության պայմաններում մինչև այս ժամանակ, յերբ արեմտայելքուղական կապիտալիստական յերկրները կը ըորդեն իրենց զարգացումը գեղի սոցիալիզմ: Բայց նրանք այդ զարգացումը բոլորում են վոչ այնպես, ինչպես մենք առաջ սպասում եյինք: Նրանք բոլորում են այդ զարգացումը վահանակ թե սոցիալիզմի հավասարաշափ «հասունացմամբ» նրանց մեջ, այլ մի շարք պետությունների շահագործման ուղիղով այլ պետությունների կողմից, իմպերիալիստական պատերազմի ժամանակ սլարտված պետություններից առաջնի շահագործման ուղիղով, մի շահագործում, վորը միացած եւ ամբողջ Արևելքի շահագործման հետ: Իսկ Արևելքը, մյուս կողմից, վերջնականապես ընկել եւ հեղափոխական շարժման մեջ հետո այնին իմպերիալիստական պատերազմի հետևանքով և վերջնականապես ներգրավվել եւ համաշխարհային հեղափոխական շարժման ընդհանուր հորածական մեջ:

Իսկ իրերի այսպիսի դրությամբ վրապիսի տակտիկա յի թելաղրվում մեր յերկրի գործերի համար: Անշուշտ՝ հետևյալը մենք պետք եւ մեծագույն աստիճանի գգուշություն յերեան բերենք՝ պահպանելու համար մեր բանվորական իշխանությունը, նրա հեղինակության տակ և նրա գեկավարության տակ պահելու համար մեր մանր ու մանրագույն գյուղացիությունը: Մեր կողմն եւ այն պլյուսը, վոր ամբողջ աշխարհին արդեն անցնում եւ այնպիսի շարժման, վորը պետք եւ ծնունդ տա համաշխարհային սոցիալիստական հեղափոխության: Բայց մեր մինուսն այն եւ, վոր իմպերիալիստներին հաջողվեց պառակտել ամբողջ աշխարհը յերկու բանակի, ըստվորում այդ պառակտումը բարգացած եւ նրանով, վոր այժմ ծայր աստիճանի գժվար եւ վոտքի կանգնել Գերմանիային՝ այդ իրոք առաջավոր կուլտուրական կապիտալիստական զարգացումը ունեցող յերկրին: Այսպես կոչված Արևմուտքի բոլոր կապիտալիստական տերությունները կտցանարում են նրան և չեն թողնում, վոր նա վոտքի կանգնի: Իսկ մյուս կողմից՝ ամբողջ Արևելքը, իր աշխատավոր շահագործվող բնակչության հարյուրավոր միլիոններով, վորին հասցերել են մարդկային ծայրահեղության վերջին աստիճանին, դրված եւ այնպիսի պայմանների մեջ, յերբ նրա ֆիզիկական ու նյութական ուժերը վճռականորեն չեն կարող համեմատվել արևմտայելքուղական շատ ավելի փոքր պետություններից յուրաքանչյուրի ֆիզիկական, նյութական ու սազմական ուժերի հետ:

Արդյոք կարող ենք փրկվել մենք այդ իմպերիալիստական պետությունների հետ ունենալիք պապա

ընդհարումից: Արդյոք ունենք այն բանի հույսը, վոր նկրքին հակասություններն ու կոնֆլիկտներն Արևմուտքի բարգավաճող իմպերիալիստական պետությունների և Արևելքի բարգավաճող իմպերիալիստական պետությունների միջև յերկրորդ անգամ ժամանակամիջոց կտան մեզ, ինչպես տվին առաջին անգամ, յերբ ոռուսական հականեղավոխությանն ոժանդակող արեմտայելվրոպական հականեղափոխության արշավանքն իդերև յելավ շնորհիվ այն հակասությունների, վոր գոյություն ունեցին Արևմուտքի և Արևելքի հականեղավոխականների բանակում, արևելյան շահագործողների բանակում, ձապոնիայի և Ամերիկայի բանակում:

Այդ հարցին, ինձ թվում ե, պետք ե պատասխանել այսպիս. այստեղ լուծումը կախված է չափագանց շատ հանգամանքներից, և պայքարի յելքն ընդհանուր առմամբ և ամբողջապես նախատեսել կարելի յե միայն այն հիման վրա, վոր յերկրագնդի բնակչության հրակայական մեծամասնությունը վերջիվերջո հենց իրեն՝ կապիտալիզմի կողմից սովորեցվում ու դաստիպակավում ե պայքարի համար:

Կովի յելքը վերջին հաշվով կախված ե նրանից, վոր Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը և այն կազմում են բնակչության հսկայական մեծամասնությունը: Խոկ բնակչության հենց այդ մեծամասնությունն ել վերջին տարիների ընթացքում արտասովոր արագությամբ ներգրավվում ե կովի մեջ իր ազատագրման համար, այնպես վոր այդ իմաստով կասկածի նշույլ անգամ չի կարող լինել այն մասին, թե ինչպիսի վերջնական լուծում կունենա համաշխարհային

կովիլը: Այդ իմաստով սոցիալիզմի վերջնական հաղթանակն ապահովված ե միանգամայն և անպայման:

Բայց սոցիալիզմի վերջնական հաղթանակի այդ անխուսափելիությունը չե, վոր մեզ հետաքրքրում ե: Մեզ համար հետաքրքրական և այն տակտիկան, վոր պետք ե վարենք մենք, Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը, մենք, Ռուսաստանի Խորհրդային իշխանությունը, վորպեսզի թույլ չտանք արևմտայելվրոպական հականեղափոխական պետություններին հզմել մեզ: Վորպեսզի ապահովենք մեր գոյությունը մինչև հետեյալ ուղղմական ընդհարումը հականեղափոխական իմպերիալիստական Արևմուտքի և հեղափոխական ու ազգայնական Արևելքի միջև, աշխարհի ամենաքաղաքակրթված պետությունների և ըստ արեվելյանի հետամնաց պետությունների միջև, վորոնք, սակայն, մեծամասնություն են կազմում, — այդ մեծամասնությունը պետք ե կարողանա քաղաքակրթվել: Մեզ ևս պակասում ե քաղաքակրթությունը, վորպեսզի անմիջապես անցնենք սոցիալիզմին, թեև մենք դրա համար ունենք քաղաքական նախադրյաներ: Մենք պետք ե վարենք այսպիսի տակտիկա կամ ընդունենք մեր փրկության համար հետեյալ քաղաքականությունը:

Մենք պետք ե աշխատենք կառուցել մի պետություն, վորի մեջ բանվորները կարողանան պահպանել իրենց գեկավարությունը գյուղացիների նկատմամբ, գյուղացիների վստահությունն իրենց հանդեպ և իրենց հասարակական հարաբերություններից մեծագույն խնայողությամբ արտաքսեն ամեն մի շուայլության քոլոր հետքերը:

Մենք պետք ե մեր պետապարատում մտցնենք առավելագույն խնայողություն։ Մենք պետք ե նրա միջից արտաքսենք այն շուայլությունների բոլոր հետքերը, վորոնք այնքան շատ հն մնացել նրա մեջ ցարական Ռուսաստանից, նրա բյուրովը բարձրական-կապիտալիստական ապարատից։

Արդյոք այդ չի լինի գյուղացիական սահմանափակածության թագավորություն։

Վճռ։ Յեթե մենք բանվոր դասակարգի ձեռքում պահենք զեկավարությունը գյուղացիության վերաբերմամբ, ապա մենք հնարավորություն կունենանք տնտեսության մեծագույն ու մեծագույն խնայողության գնով մեր պետության մեջ համնելու այն բանին, վորպեսզի ամեն մի փոքրագույն խնայողություն պահենք մեր խոշոր մեքենայական ինդուստրիայի գարգացման համար, ելեկտրիֆիկացիայի, հիդրոտորֆի գարգացման համար, Վոլփովստրոյի կառուցումն ավարտելու համար և այլն։

Այս և միմիայն այս կլինի մեր հույսը։ Միայն այն ժամանակ մենք ի վիճակի կլինենք, պատկերավոր կերպով ասած, մի ձիուց նստել մյուս ձին, այն եւ գյուղացիական, մուտքիկի, ուժից ընկած ձիուց, գյուղացիական քայլքայված յերկրին համապատասխան խնայողությունների ձիուց նստել այն ձին, վորին փնտում ե և չի կարող չփնտել իր համար պըուտարիատը, — խոշոր մեքենայական ինդուստրիայի, ելեկտրիֆիկացիայի, Վոլփովստրոյի և այլն ձին։

Այս թե ինչպես եմ յես իմ մտքում շաղկապում վերակաղմակերպված Բանգյուղտեսչության անելիքների հետ մեր աշխատանքի, մեր քաղաքականության,

մեր տակտիկայի, մեր ստրատեգիայի ընդհանուր պլանը։ Ահա թե ինձ համար վորոն և այն բացառիկ հոգացողության, այն բացառիկ ուշադրության արդարացումը, վոր մենք պետք ե նվիրենք Բանգյուղտեսչությանը, նրան բացառիկ բարձրության վրա դնելով՝ տալով նրան կե-ի իրավունքներով ոժտված զեկավարություն և այլն, և այլն։

Այդ արդարացումն այն է, վոր մեր ապարատի առավելագույն գուման միջոցով միայն, կրծատելով առավելագույն չափով այն ամենը, ինչ վոր նրա մեջ բացարձակապես անհրաժեշտ չե, մենք ի վիճակի կլինենք դիմանալու հավաստապես։ Յեկ բացի այս մենք ի վիճակի կլինենք գիմանալու, վոհ թե մանր-գյուղացիական յերկրի մակարդակի վրա, վոհ թե այդ ընդհանրական սահմանափակվածության մակարդակի վրա, այլ այն մակարդակի վրա, վորն անշեղ բարձրանում ե առաջ ու առաջ դեպի մեքենայական խոշոր ինդուստրիան։

Ահա թե վորպիսի բարձր խնդիրների մասին եմ յերազում յես մեր Բանգյուղտեսչության համար։ Ահա թե ինչու յեմ յես ծրագրում նրա համար կուսակցական ամենահեղինակավոր վերնախավի միաձուլումը «Հարգային» ժողկումատի հետ։

1923 թ. մարտի 2:

Ֆապազիում և ըստ Յերկերի

Յ-րդ հրատարակության,

Տ. XXVII, էջ 406—418։

Առողջություն՝

Ն. Լ. Ե. Ի. 6



Թարգմ. Պ. Արելյան

Խմբագիր Բ. Ն. Դավթյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սըբ. Վ. Զիդեջյան

Կոնսոր սրբագրիչ Լ. Արուլյան

---

Դրամիաթիվ լիազոր Կ—3254, հրատ. № 524

Գատվեր № 239, տիրամ 5000


Հանձնված ե արտադրության 25/XII 1937 թ.

Ստորագրված ե ապահովելու 10/I 1938 թ.

Գինը 30 կ., կազմը 20 կ.

Հայկումհրատի տպարան, Յերևան

Ալավերդյան 71



ՀՀ Ազգային գրադարան



NL0936673

1 ФЕВ. 1938

30

ԳԻՒԾ 50 Կ

11

28502

В. И. ЛЕНИН  
ЛУЧШИЕ МЕНЬШЕ,  
ДА ЛУЧШИЕ

Аршартиздат, Ереван, 1938